LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF

# Ծրագրի և ծրագրին դիմելու ուղեցույց

Խմբագրվել է՝ 12/16/25

Լոս Անջելեսի արտակարգ իրավիճակներում վարձակալության վճարների մասով օգնության դրամաշնորհային ծրագիրը («Ծրագիր») կառավարվում է Լոս Անջելես վարչաշրջանի Սպառողների և առևտրային ձեռնարկությունների հարցերով զբաղվող վարչության (County Department of Consumer and Business Affairs, DCBA) կողմից՝ դրա ադմինիստրատոր The Center by Lendistry-ի միջոցով:

Ադմինիստրատորը կառավարում է Ծրագիրը DCBA-ի անունից և կարող է օգտվել երրորդ կողմի ծառայություններ տրամադրողներից՝ այս Ծրագրի հատուկ տարրերը կատարելու համար: Ո՛չ ադմինիստրատորը, ո՛չ դրա երրորդ կողմի ծառայություններ տրամադրողները չեն որոշում Ծրագրի շրջանակը, իրավասության չափանիշները, հաղորդակցման ռազմավարությունը կամ ժամկետները. ծրագրի բոլոր պահանջները սահմանվում են DCBA-ի կողմից:

Տրամադրված տեղեկատու նյութերում նշված տեղեկատվությունը ենթակա է փոփոխման:

# Ծրագրի համառոտ նկարագրություն

## Ծրագրի համառոտ նկարագրություն

Լոս Անջելես վարչաշրջանի Սպառողների և առևտրային ձեռնարկությունների հարցերով զբաղվող վարչությունը (Department of Consumer and Business Affairs, DCBA) մեկնարկում է Արտակարգ իրավիճակներում վարձակալության վճարների մասով օգնության ծրագիրը՝ վերջին արտակարգ իրավիճակներից տուժած համապատասխան գույքի սեփականատերերին և վարձակալներին ֆինանսական օգնություն տրամադրելու համար:

Այս Ծրագրով առաջնահերթություն կտրվի չորս կամ ավելի քիչ վարձակալության օբյեկտ ունեցող փոքր տնատերերին՝ նրանց օգնելու մեղմել արտակարգ ֆինանսական դժվարությունները՝ միաժամանակ նվազեցնելով վարչաշրջանում չվճարված վարձակալության վճարների պատճառով վտարվող վարձակալների թիվը:

## Դրամաշնորհային պարգևներ

- Մինչև վեց (6) ամսվա վարձակալության վճարի պարտքը կարող է մարվել:
- Սահմանափակ բացառություններով՝ վարձակալության օբյեկտի համար առավելագույն դրամաշնորհը կազմում է $15,000:

## Միջոցների թույլատրելի օգտագործում

Դրամաշնորհային միջոցները կարող են օգտագործվել հետևյալի համար.

- Չվճարված վարձակալության վճար (վարձակալության պարտքեր),
- Չվճարված հիփոթեքային վարկ. և/կամ
- Վարձակալության վճարից անկախ այլ չվճարված ծախսեր, որոնք անմիջականորեն կապված են 2025 թվականի Իթոնի կամ Փալիսեյդսի հրդեհների և փոթորկների կամ որևէ այլ արտակարգ ֆինանսական դժվարությունների հետ:

## Ո՞վ է իրավասու դիմել:

- Տնատերեր. Անհատներ կամ կազմակերպություններ, որոնք չունեն չվճարված վարձակալության վճար կամ այլ իրավասու ծախսեր Լոս Անջելես վարչաշրջանում գտնվող գույքի համար, ներառյալ հունվարի 7-ին Իթոնում և Փալիսեյդսում տեղի ունեցած անտառային հրդեհներից կամ որևէ այլ արտակարգ ֆինանսական դժվարություններից տուժած անձինք:

- Տեղահանված տան սեփականատերեր. Հունվարի 7-ին Իթոնում և Փալիսեյդսում տեղի ունեցած անտառային հրդեհների պատճառով տեղահանված տան սեփականատերեր, ովքեր ունեն չվճարված վարձավճար իրենց ներկայիս վարձակալված տներում և/կամ չվճարված հիփոթեքային վարկ այն տան համար, որտեղից նրանք տեղահանվել են, և սպառել են Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (Federal Emergency Management Agency, FEMA)/ապահովագրական վարձակալության աջակցության գումարը:

**ՆՇՈՒՄ. Վարձակալները չեն կարող ուղղակիորեն դիմել, սակայն կարող են ուղղորդել իրենց տնատերերին, որ նրանք դիմեն, եթե վերջիններս ունեցել են արտակարգ իրավիճակի հետ կապված վարձակալության վճարի պարտք:**

# Առաջնահերթության մեթոդաբանություն

## Ո՞ր դիմումները կենթարկվեն առաջնահերթ դիտարկման:

1. Լոս Անջելես վարչաշրջանի հավասարության դիտարկիչ (LA County Equity Explorer) գործիքում տեղակայված օբյեկտներ, որոնք սահմանվում են որպես ամենաբարձր և բարձր օգնության կարիք ունեցող աշխարհագրական տարածքներ:
    - Ծրագրում օգտագործվում է COVID-ի խոցելիության և վերականգնման քարտեզի շերտը՝ պարզելու համար, թե որ համայնքներն ունեն ամենաբարձր կարիքները և առավել խոցելի են: Սա օգնում է ապահովել, որ մենք ուղղենք ֆինանսական օգնությունն այնտեղ, որտեղ այն առավել արդյունավետ կլինի:

2. Այն տնատերերն, ովքեր ունեն չորս (4) կամ ավելի քիչ վարձակալության օբյեկտ:

3. Այն գույքի սեփականատերերն, ում ընտանեկան եկամուտը 80 տոկոս կամ ավելի ցածր է Լոս Անջելես վարչաշրջանի տարածքի միջին եկամտի մակարդակից:

4. Եթե տնատիրող եկամուտը հասանելի չէ, ապա առաջնահերթությունը կտրվի այն վարձակալ ընտանիքներին, ում ընտանեկան եկամուտը 80 տոկոս կամ ավելի ցածր է Լոս Անջելես վարչաշրջանի տարածքի միջին եկամտի մակարդակից:

5. Այն տնատերերը, ովքեր կարող են ամբողջությամբ մարել վարձավճարի ամբողջ պարտքը ֆինանսական աջակցության միջոցով, այսինքն՝ վարձակալների պարտքն ավելի քիչ է, քան առավելագույն դրամաշնորհը յուրաքանչյուր օբյեկտի համար, որը ներկայումս սահմանված է որպես 6 ամսվա վարձակալության պարտք սահմանափակ բացառություններով՝ $15,000 առավելագույն դրամաշնորհով:
    1. Օրինակ, տնատերը պատրաստ է կամավոր կերպով հրաժարվել առավելագույն պարգևատրման չափը գերազանցող ցանկացած ավելցուկային վարձակալական պարտքից:

# Իրավասության չափանիշներ



Դրամաշնորհի համար ընտրված դիմումատուները պետք է համապատասխանեն իրավասության հետևյալ չափանիշներին.

- Վարձակալված գույքը պետք է գտնվի Լոս Անջելես վարչաշրջանի սահմաններում:
- Տնատերը/գույքի սեփականատերը պետք է տրամադրի սեփականության իրավունքի հավաստի ապացույց՝ երրորդ կողմի ռեսուրսներով անկախ կերպով հաստատված:
- W9-ի տեղեկատվությունը պետք է համապատասխանի Ներքին եկամուտների ծառայության (Internal Revenue Service, IRS) արձանագրություններին:
- Վարձակալության հետ կապված հարաբերությունները պետք է հաստատված լինեն վարձակալության պայմանագրով:
- Հաստատված է, որ ազդեցության ենթարկված օբյեկտ(ներ)ը զբաղեցված էին ազդեցության ենթարկված վարձակալ(ներ)ի կողմից՝ մինչև 2025 թվականի հունվարի 7-ը, ինչպես նաև հաստատված է վարձակալության վճարների պարտքերի առկայությունը:
- Չափանիշներին համապատասխանող ծախսերը պետք է հաստատվեն փաստաթղթերով:
- Դիմումատուն պետք է համապատասխանի հետևյալ սլայդում նշված իրավասության անվանակարգերից մեկին:

# Իրավասության չափանիշներ (շար.)

## Անտառային հրդեհներից տուժած վարձակալներ

Սա ներառում է այն տնատերերին, ում վարձակալներն անմիջականորեն տուժել են անտառային հրդեհներից:

- Վարձակալները պետք է բնակված լինեն բնակարանում մինչև 2025 թվականի հունվարի 7-ը:
- Վարձակալների տնային տնտեսության եկամուտը 2024 թվականին տարածքի միջին եկամտի (Area Median Income, AMI) 150%-ից ցածր է:
- Վարձակալները կորցրել են իրենց ամսական եկամտի ավելի քան 10%-ն անտառային հրդեհների պատճառով:
- Վարձակալները սկսել են որոնել եկամտի աղբյուրի փոխարինում:
- Վարձակալները տրամադրել են գրավոր ինքնահավաստագրման ձև, որում նշված է, որ նրանք չեն կարող վճարել վարձակալության վճարը 2025 թվականի հունվարին տեղի ունեցած անտառային հրդեհների պատճառով:

Օգնության գումարը. Մինչև վեց (6) ամսվա՝ անտառային հրդեհների հետ կապված վարձակալության վճարի պարտք

## Անտառային հրդեհներից տուժած բնակչություն

Սա ներառում է այն տնատերերին, ում վարձակալներն անմիջականորեն տուժել են անտառային հրդեհներից, համապատասխանում են անտառային հրդեհներից տուժած վարձակալների չափանիշներին, սակայն չեն տրամադրել գրավոր ինքնահավաստագրման ձև:

Օգնության գումարը. Մինչև վեց (6) ամսվա՝ անտառային հրդեհների հետ կապված վարձակալության վճարի պարտք

**Տեղահանված վարձակալներ և տան սեփականատերեր**
Սա ներառում է տեղահանված վարձակալներին և տան սեփականատերերին, ովքեր սպառել են FEMA կամ ապահովագրության կողմից տրամադրված վարձակալության օգնության գումարը:

Օգնության գումարը. Մինչև վեց (6) ամսվա՝ անտառային հրդեհների հետ կապված վարձակալության վճարի պարտք, որը չի գերազանցում $15,000

**Տնատերեր, ովքեր ունեն Վարձակալության վճարների կայունացման և վարձակալների պաշտպանության մասին որոշման (RSTPO) գործողությանը ենթարկվող օբյեկտներ**
Սա ներառում է փոքր տնատերերին, ովքեր ունեն Վարձակալության վճարների կայունացման և վարձակալների պաշտպանության մասին որոշման (Rent Stabilization and Tenant Protection Ordinance, RSTPO) գործողությանը ենթարկվող օբյեկտներ, որոնք դատարկ են մնացել հրդեհների հետ կապված վերանորոգումների պատճառով:

- Ազդեցության ենթարկված վարձակալության օբյեկտը պետք է ունենա ակտիվ հիփոթեք:
- Ազդեցության ենթարկված վարձակալության օբյեկտը պետք է վերադարձվի վարձակալության շուկա դրամաշնորհը ստանալուց հետո 12 ամսվա ընթացքում:
- Այս օբյեկտները պետք է բնակեցված լինեն 2025 թվականի հունվարի 7-ից առաջ վեց (6) ամսվա ընթացքում:

Օգնության գումարը. Մինչև վեց (6) ամսվա՝ անտառային հրդեհների հետ կապված վարձակալության վճարի պարտք, որը չի գերազանցում $15,000

# Իրավասության չափանիշներ (շար.)

## Արտակարգ տնտեսական դժվարությունների բախված տնային տնտեսություններ

Սա ներառում է վարձակալական տնային տնտեսություններ ունեցող տնատերերին, ովքեր բախվել են արտակարգ իրավիճակների կամ այլ ի հայտ եկող տնտեսական դժվարությունների:

Իրավասու տնային տնտեսությունների թվում կարող են լինել այն անձինք, ովքեր բախվել են հանկարծակի եկամտի կորստի՝ ներգաղթյալ համայնքներին և բնակարանային անկայունության կամ վտարման վտանգի տակ գտնվող տնային տնտեսություններին ուղղված դաշնային գործողությունների պատճառով:

Օգնության գումարը. Մինչև վեց (6) ամսվա՝ անտառային հրդեհների հետ կապված վարձակալության վճարի պարտք, որը չի գերազանցում $15,000

**Խնդրում ենք հաշվի առնել. Ծրագրի իրավասությունը չի պահանջում տնային տնտեսության անդամների ներգաղթի կարգավիճակի բացահայտում: Սակայն Վարչաշրջանը ճանաչում է այն եզակի տնտեսական դժվարությունները, որոնց բախվել են տնային տնտեսությունները, երբ եկամուտ ստացող անձը կալանավորված է դաշնային ներգաղթի օրենդրության պահպանման գործողությունների պատճառով:**

**Հաշվի առնելով վերջին շրջանում տարածաշրջանում նման գործողությունների տարածումը և կալանավածների տնային տնտեսությունների վրա դրա ազդեցությունը, ծրագրի նպատակն է ապահովել, որ այս խումբը ստանա անհրաժեշտ օգնությունը: Հետևաբար, եթե տնային տնտեսությունը նշում է, որ իր տնտեսական դժվարությունները դաշնային իրավապահ մարմինների վերջին գործողությունների արդյունք են, Ծրագիրը կարող է պահանջել ապացույցներ՝ հաստատելու համար, որ տնային տնտեսությունը տուժել է ներգաղթյալների կալանավորումից:** Եթե սա ձեզ հասանելի չէ, կամ եթե որոշեք չբացահայտել այս տեղեկատվությունը, միևնույն է, կարող եք իրավասու լինել վարձակալության վճարի մասով օգնության, եթե տնտեսական դժվարությունների եք բախվել:

# Դիմումատուի կողմից ներկայացված վկայություններ



Դիմումատուի կողմից ներկայացված վկայությունները պետք է ներկայացվեն որպես պարտադիր փաստաթուղթ դիմումի դիտարկման գործընթացի ընթացքում: Դիմումատուի կողմից ներկայացված վկայությունները հաստատում են դիմումում ներկայացված տեղեկատվության իսկությունը և հանդիսանում է իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթ:

Հետևյալ վկայությունները ներառվելու են դիմումում, եթե կիրառելի է, և հանդիսանում են դրամաշնորհի տրամադրման պայման.

- Հաստատել ինքնությունը որպես փոքր տնատեր (այսինքն՝ չորս կամ ավելի քիչ վարձակալության օբյեկտների օրինական սեփականատեր)
- Սկսել է «Եկամտի փոխարինման ջանքերը»
- Անտառային հրդեհներից առաջ ունեցել է ամսական եկամտի ավելի քան 10%-ի ուղղակի ֆինանսական ազդեցություն
- Նախկինում վարձակալության կամ հիփոթեքի համար FEMA-ից և/կամ ապահովագրությունից ստացված օգնություն
- Այս դրամաշնորհի ընդունումը բավարարում է վարձակալության ամբողջական պարտքը՝ իրավասու ժամանակաշրջանի համար*
- Հարկավոր է օբյեկտ(ներ)ը վերադարձնել վարձակալության շուկա դրամաշնորհը ստանալուց հետո 12 ամսվա ընթացքում

*Առավելագույն դրամաշնորհի գումարից ավելի վարձակալության պարտքի մարումը կամավոր է և չի պահանջվում տնատերերից:

LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF

# Ծրագրի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր

1. Ինքնության ապացույց,
2. Եկամտի ապացույց,
3. Սեփականության ապացույց,
4. Օբյեկտի վարձակալության մասին ապացույց, որի համար դիմում է ներկայացվել,
5. Վարձավճարի պարտքի ապացույց, և
6. Ծրագրի պահանջներին համապատասխանող չմարված ծախսերի ապացույց:
7. Անտառային հրդեհների հետ կապված վերանորոգման կարիքների ապացույց
8. Արտաքսման և/կամ կալանավորման ապացույց

# Ծրագրի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր



Ծրագրի շրջանակներում վարձակալության կամ կոմունալ ծառայությունների մասով օգնության համար դիմումին կից պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը (փաստաթղթերի այս ցանկը սպառիչ չէ, և Լոս Անջելես վարչաշրջանի DCBA-ի հայեցողությամբ իրավունակության ստուգման գործընթացում ցանկացած պահի կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր՝ ծրագրի հրահանգների համաձայն):

1. **Ինքնության հաստատման ձևերից մեկը, օրինակ՝**
   a. Կառավարության կողմից տրված լուսանկարով ID՝ Դա կարող է լինել վավեր վարորդական վկայական, պետական ID քարտ, անձնագիր (ներառյալ՝ միջազգային) կամ զինվորական ID,
   b. Ծննդյան վկայական՝ դիմումատուի ծննդյան վկայականի վավեր պատճենը,
   c. Սոցիալական ապահովության քարտ՝ դիմումատուի սոցիալական ապահովության քարտի բնօրինակը կամ վավեր պատճենը,
   d. Գրին քարտի կամ իմիգրացիոն կարգավիճակի փաստաթղթեր՝ ԱՄՆ-ի ոչ քաղաքացիների համար՝ փաստաթղթեր, որոնք հաստատում են նրանց իմիգրացիոն կարգավիճակը, օրինակ՝ մշտական բնակության քարտ (Գրին քարտ) կամ աշխատանքային վիզա,
   e. Հպատակագրման վկայական՝ հպատակագրված քաղաքացիների համար՝ հպատակագրման վկայականի պատճենը,
   f. Քաղաքացիության վկայական՝ այն անհատների համար, ովքեր ԱՄՆ քաղաքացիություն ձեռք են բերել այլ միջոցներով, օրինակ՝ ծնողների միջոցով, քաղաքացիության վկայականի պատճենը,
   g. Ցեղի նույնականացման քարտ՝ հայտնի բնիկ ամերիկացիների ցեղերի անդամների համար՝ վավեր ցեղային ID քարտ,
   h. Հյուպատոսական նույնականացման քարտ՝ օտարերկրյա քաղաքացիների համար՝ հյուպատոսական ID քարտ՝ տրված իրենց երկրի դեսպանատան կամ հյուպատոսության կողմից,
   i. Ընտրողի գրանցման քարտ՝ որոշ դեպքերում ընտրողի գրանցման վավեր քարտը կարող է օգտագործվել նաև որպես անձը հաստատող փաստաթուղթ,
   j. Սոցիալական աջակցության քարտ՝ որոշ նահանգներ թողարկում են սոցիալական աջակցության քարտեր, որոնք կարող են օգտագործվել որպես ինքնության ապացույց պետական ծրագրերի համար,
   k. Դպրոցի կամ քոլեջի ID՝ եթե դիմումատուն ուսանող է, ներկայիս դպրոցի կամ քոլեջի ID-ն կարող է ընդունվել,
   l. Կոմունալ վճարումներ՝ վերջին կոմունալ վճարումների (օրինակ՝ էլեկտրաէներգիայի, ջրի, գազի) կտրոնը, որտեղ նշված կլինեն դիմումատուի անունը և հասցեն, կարող է ծառայել որպես ինքնության հաստատման ապացույց,
   m. Բանկային քաղվածքներ՝ վերջին բանկային քաղվածքները, որտեղ նշված կլինեն դիմումատուի անունը և հասցեն, նույնպես կարող են որպես ինքնության ապացույց ծառայել,
   n. Տրանսպորտային միջոցի գրանցում՝ Տրանսպորտային միջոցների սեփականատերերի համար՝ տրանսպորտային միջոցի գրանցման պատճենը, որտեղ նշված կլինեն դիմումատուի անունը և հասցեն,
   o. Աշխատանքային ID՝ Ընթացիկ աշխատանքային ID քարտը, որը տրվել է դիմումատուի գործատուի կողմից,
   p. Նամակ պետական հաստատությունից՝ Պետական հաստատությունից հայտատուի ինքնությունը հաստատող նամակ,
   q. Առանձին դեպքերում կարող են թույլատրվել այլ փաստաթղթեր:

**Շարունակությունը՝ հաջորդ էջում:**

# Ծրագրի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր



**2. Եկամուտը հաստատող ձևերից մեկը, օրինակ.**

a. Դաշնային հարկային հայտարարագրեր՝ ամենավերջին դաշնային հարկային հայտարարագրերի պատճենները (2021 թվականից առ այսօր)՝ ներառյալ բոլոր ժամանակացույցերը և հավելվածները,

b. W-2 ձևեր՝ Յուրաքանչյուր գործատուի համար նախորդ տարվա W-2 ձևերի պատճենները,

c. Աշխատավարձի մասին տեղեկանքներ՝ վերջին մի քանի ամիսների աշխատավարձի մասին վերջին տեղեկանքները՝ կայուն եկամուտը ցույց տալու համար,

d. Աշխատանքի հաստատման նամակ՝ գործատուի կողմից նամակ, որտեղ նշված է դիմումատուի պաշտոնը, աշխատավարձը և աշխատանքի ժամկահատվածը,

e. Սոցիալական ապահովության նպաստների քաղվածք՝ քաղվածք, որտեղ ներկայացված է ստացված սոցիալական ապահովության նպաստների չափը,

f. Կենսաթոշակ կամ կենսաթոշակային եկամուտ՝ կենսաթոշակի կամ կենսաթոշակային եկամտի մասին փաստաթղթեր, օրինակ՝ նպաստների քաղվածք,

g. Գործազրկության նպաստներ՝ ստացված գործազրկության նպաստների մասին փաստաթղթեր, եթե կիրառելի է

h. Հաշմանդամության եկամուտ՝ հաշմանդամության եկամտի ապացույց, օրինակ՝ նպաստների քաղվածքներ,

i. Ալիմենտ կամ երեխայի ապրուստադրամ՝ դատական փաստաթղթեր կամ գրավոր համաձայնագրեր, որտեղ ներկայացված են ստացված ալիմենտի կամ երեխայի ապրուստի համար վճարումները,

j. Վարձակալությունից եկամուտ՝ սեփական գույքի վարձակալությունից ստացված եկամտի մասին փաստաթղթեր,

k. Տոկոսներ և շահաբաժիններ՝ բանկերից կամ ֆինանսական հաստատություններից քաղվածքներ, որոնք ցույց են տալիս տոկոսների և շահաբաժինների մասով եկամուտը,

l. Բանկային քաղվածքներ՝ բանկային քաղվածքների պատճեններ, որտեղ ներկայացված է ստանդարտ ավանդների և հաշիվների մնացորդների մասին տեղեկատվություն,

m. Խնայողական պարտատոմսեր՝ խնայողական պարտատոմսերից ստացված տոկոսների ապացույց,

n. Վետերանների նպաստներ՝ վետերաններին տրամադրվող նպաստների ստացման փաստաթղթեր,

o. Սոցիալական աջակցություն կամ Ժամանակավոր օգնություն կարիքավոր ընտանիքներին՝ Ստացված ցանկացած պետական աջակցության կամ Կարիքավոր ընտանիքներին ժամանակավոր օգնության (TANF) ապացույց,

p. Աշխատողի փոխհատուցում՝ աշխատողի փոխհատուցման նպաստների փաստաթղթեր,

q. Ռենտայի հաշվետվություններ՝ հաշվետվություններ, որտեղ ներկայացված են ռենտայից ստացվող կանոնավոր եկամուտները,

r. Բաժնետոմսեր կամ պարտատոմսեր՝ բաժնետոմսերից կամ պարտատոմսերից ստացված եկամտի փաստաթղթեր,

s. Տրաստային գործառնություններից ստացված եկամուտ՝ տրաստային գործառնություններից ստացված եկամտի ապացույց,

t. Կառավարության կողմից այլ աջակցություն՝ ստացված այլ պետական աջակցության փաստաթղթեր,

u. Ինքնազբաղվածությունից եկամուտ՝ եթե ինքնազբաղված եք, հարկային հայտարարագրերի և շահույթի/վնասի մասին հաշվետվությունների պատճեններ,

v. Բացատրական նամակ՝ Նամակ, որով բացատրվում է եկամտի վրա ազդող հանգամանքները,

w. Առանձին դեպքերում կարող են թույլատրվել այլ փաստաթղթեր:

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

# Ծրագրի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր

**3. Սեփականությունը հաստատող ձևերից մեկը, օրինակ.**

a. Սեփականության վկայական՝ Սեփականության վկայականի պատճենը, որտեղ նշված է դիմումատուի անունը՝ որպես սեփականատեր,

b. Սեփականության իրավունքի ապահովագրության վկայագիր՝ սեփականության իրավունքի ապահովագրության վկայագրի պատճենը, որը հաստատում է սեփականության իրավունքը և գույքի հետ կապված ցանկացած պարտավորություն,

c. Գույքահարկի հաշվետվություն՝ ընթացիկ գույքահարկի հաշվետվություն կամ սեփականության իրավունքի մասին տեղեկանք,

d. Հիփոթեքի վերաբերյալ հաշվետվություն՝ հիփոթեքի վերաբերյալ վերջին հաշվետվությունը, որտեղ դիմումատուն նշված է որպես վարկառու,

e. Տան սեփականատերերի ապահովագրության վկայական՝ գույքի համար տան ներկայիս սեփականատիրոջ ապահովագրության վկայականի պատճենը,

f. Գույքի գնահատման հաշվետվություն՝ գույքի գնահատման վերջին հաշվետվությունը, որտեղ դիմումատուն ներկայացված է որպես սեփականատեր,

g. Գույքի գնահատման մասին ծանուցում՝ Գույքի գնահատման մասին ծանուցման պատճենը տեղական հարկային տեսչական գրասենյակի կողմից,

h. Տան գրավադրմամբ վարկային գծի (HELOC) քաղվածք՝ Եթե կիրառելի է, քաղվածք տան գրավադրմամբ վարկային գծի հաշվից,

i. Տան գնման պայմանագիր՝ Պայմանագրի պատճենը, որը կնքվում է գույք գնելիս,

j. Գույքի նկատմամբ իրավունքների կարգավորման քաղվածք (HUD-1) HUD-1 գույքի նկատմամբ իրավունքների կարգավորման քաղվածք, որն օգտագործվում է գույքի գնման ժամանակ,

k. Իրավունքից հրաժարման ակտ՝ Եթե գույքի սեփականությունը փոխանցվել է իրավունքից հրաժարման ակտով, ակտի պատճենը,

l. Գույքի գնում՝ Գույքի վերջին գնման մասին հաշվետվություն,

m. Գույքի սեփականության իրավունքի փոխանցման ակտ՝ Եթե գույքի սեփականության իրավունքը փոխանցվել է ակտով, ակտի պատճենը,

n. Կոմունալ վճարումներ՝ Գույքի հասցեի համար դիմումատուին հասցեագրված վերջին կոմունալ վճարումները,

o. Առանձին դեպքերում կարող են թույլատրվել այլ փաստաթղթեր:

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

# Ծրագրի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր

**4. Օբյեկտի վարձակալության մասին ապացույցի ձև, որի համար դիմում է ներկայացվել, օրինակ՝**

a. Ընթացիկ կնքված վարձակալության համաձայնագիր,

b. Այլ գրավոր համաձայնագիր,

c. Վճարված չեկերի կամ բանկային քաղվածքների պատճեններ, որտեղ նշված են տանտիրոջը կատարված վարձակալության վճարումները,

d. Առանձին դեպքերում կարող են թույլատրվել այլ փաստաթղթեր:

**5. Վարձակալության պարտքը հաստատող ձևերից մեկը, օրինակ.**

a. Վարձավճարների հետ կապված վարձակալների պարտքերի ընթացիկ հաշվառման մատյան (յուրաքանչյուր ամսվա համար, այդ թվում՝ վարձակալության մասով ցանկացած օգնություն, որը նախկինում անմիջականորեն վճարվել է տանտիրոջը, եթե կիրառելի է)

b. Ընթացիկ վճարվելիք վարձակալության վճարի մասին հաշվետվություն/նամակ տանտիրոջից կամ կառավարող ընկերությունից

c. Վտարման մասին նախնական ծանուցումներ, այդ թվում՝ 15 օր, 3 օր առաջ ուղարկվող ծանուցումներ, կամ վճարման մասին այլ ծանուցումներ (պետք է ներառված լինի վարձակալության վճարի չմարված գումարը):

**6. Ծրագրի պահանջներին համապատասխանող չմարված ծախսերը հաստատող ձևերից մեկը, օրինակ.**

a. Կոմունալ ծառայությունների համար չվճարված գումարների ընթացիկ հաշիվները, որոնք հաստատում են, որ գազի, էլեկտրաէներգիայի, ջրի և/կամ աղբահանության ծառայությունների համար (որոնք տրամադրվել են Southern California Edison, Southern California Gas Company, WM, Consolidated Disposal Service, Allied Waste Services և ուրիշ ընկերությունների կողմից) չի վճարվել:

b. Կանաչապատման ծառայություններ,

c. Ցանկացած կիրառելի վճար, որը փոխանցվել է վարձակալին որպես վարձակալության համաձայնագրի և վարձակալության վճարների մաս,

d. Վարձակալության պայմանագրում և օբյեկտի վարձակալության մեջ ներառված հարմարությունների պահպանման/սպասարկման ծախսերը,

e. Ուշացված վճարի համար տույժ, քանի որ տնատերը չի կարողացել վճարել վերոնշյալ կոմունալ և պահպանման/սպասարկման ծախսերը:

# Ծրագրի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր

**7. Անտառային հրդեհների հետ կապված վերանորոգման կարիքների պատճառով դատարկ մնացած օբյեկտ(ներ)ի համար անհրաժեշտ է ապացույց, օրինակ՝**

a. Բոլոր նախահաշիվների, պայմանագրերի, հաշիվների, հաշիվ-ապրանքագրերի, չեղարկված չեկերի և վերանորոգման արժեքը և դրա ֆինանսավորումը հաստատելու համար անհրաժեշտ ցանկացած այլ փաստաթղթի պատճեններ:

b. Վերանորոգման աշխատանքների համար տրված աշխատանքային պլանների և թույլտվությունների պատճեններ (առկայության դեպքում):

c. Վերանորոգման աշխատանքների մեկնարկի և ավարտի մոտավոր ամսաթվերը (եթե հայտնի են):

**8. Արտաքսման և/կամ կալանավորման ապացույց, օրինակ.**

a. Ապացույց՝ տվյալների բազայի որոնման միջոցով. https://locator.ice.gov/odls/#/search (կալանավորման տակ) կամ https://acis.eoir.justice.gov/en/ (ներգաղթի դատարանում):

b. Հայրենիքի անվտանգության դեպարտամենտի (ներգաղթի և մաքսային ծառայության կամ մաքսային և սահմանային պաշտպանության) կողմից տրված ցանկացած փաստաթուղթ, որում նշված է, որ տնային տնտեսության անդամը կալանավորվել է ներգաղթի օրենսդրության պահպանման համար կամ արտաքսվել է, կամ

c. Ներգաղթի օրենսդրության պահպանման հարցերին վերաբերող գործում վարձակալին ներկայացնող փաստաբանին տրված կանխավճար, կամ

d. Ներգաղթի օրենսդրության պահպանման հարցերին վերաբերող գործում վարձակալին ներկայացնող փաստաբանի ներգրավման նամակ, կամ

e. Ներգաղթյալների հարցերով զբաղվող համայնքային կազմակերպության հաղորդագրություն՝ արտաքսման և/կամ կալանավորման վերաբերյալ, կամ

f. Վարձակալի կողմից լրացված վկայություններ, միայն այն դեպքում, երբ վերը նշված փաստաթղթերը չեն կարող տրամադրվել:

**ՆՇՈՒՄ. Առանձին դեպքերում կարող են թույլատրվել այլ փաստաթղթեր:**

LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF

# Ինչպես բացել դիմում

# Ինչպես բացել դիմում







**1** Անցեք www.lacountyrentrelief.com և սեղմեք ԴԻՄԵԼ ՀԻՄԱ: Դուք կվերահղվեք դիմումների պորտալ:

**2** Դիմումների պորտալին հասանելիություն ստանալու համար դուք պետք է հաշիվ բացեք:

1. Մուտքագրեք ձեր էլփոստի հասցեն և սեղմեք ՈՒՂԱՐԿԵԼ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿՈԴ:

# Ինչպես բացել դիմում







**3** Ձեր էլփոստին կուղարկվի կոդ՝ այն հաստատելու համար: (Կարևոր նշում. վերոնշյալ կոդը միայն ցուցադրական նպատակների համար է: Դուք կստանաք ձեր սեփական եզակի կոդը:)

**4** Պատճենեք ձեր էլ. նամակում նշված հաստատման կոդը և մուտքագրեք այն:

# Ինչպես բացել դիմում







**5** Մուտքագրեք ձեր անունը և ազգանունը, այնուհետև գաղտնաբառ դրեք ձեր հաշվի համար: Գաղտնաբառը պետք է բաղկացած լինի առնվազն 12 նիշից, պարունակի մեծատառ և փոքրատառ, թվանշան և հատուկ նիշ:

**6** Գաղտնաբառը դնելուց հետո դուք կվերահղվեք պորտալ՝ մուտք գործելու համար:

# Ինչպես բացել դիմում







**7** Կարդացեք ՎԵՐՋՆԱԿԱՆ ՕԳՏԱՏԻՐՈՋ ԼԻՑԵՆԶԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ և ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Նշեք երկու վանդակները՝ փաստաթղթերի դրույթներին համաձայնելու համար: Շարունակելու համար սեղմեք ԸՆԴՈՒՆԵԼ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ:

**8** ՏՆԱՏԵՐԵՐ և ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ. Սեղմեք ԲԱՑԵԼ ԴԻՄՈՒՄ՝ դիմումի ներկայացման գործընթացը սկսելու համար: Մի ներկայացրեք մի քանի դիմում, քանի որ դա կարող է հանգեցնել ձեր դիմումի դիտարկման հետաձգման կամ որակազրկման:

# Ինչպես բացել դիմում







**9** Մուտքագրեք ձեր անունն ու ազգանունը հետևյալ ձևաչափով՝ *Անուն, Ազգանուն:* Շարունակելու համար սեղմեք ԲԱՑԵԼ ԴԻՄՈՒՄ :

**10** Ձեր դիմումը բացելու համար սեղմեք ՍԵՂՄԵԼ ԱՅՍՏԵՂ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Դուք կվերահղվեք դիմումի առաջին բաժին, որը կոչվում է ԴԻՄՈՒՄԻ ԴԻՏՈՒՄ:

LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF

# Դիմումի ներկայացման գործընթացը

# Կարևոր նշումներ դիմումի ներկայացման գործընթացի վերաբերյալ

### Դիմումատուի կողմից ներկայացված վկայություններ

Դիմումատուի կողմից ներկայացված վկայությունները ենթադրում են սուտ վկայության պատժի ներքո արված հայտարարություններ: Հետևյալ վկայությունները ներառվելու են դիմումում, եթե կիրառելի է, և հանդիսանում են դրամաշնորհի տրամադրման պայման.

- Չորս կամ ավելի քիչ օբյեկտների օրինական սեփականատեր
- Սկսել է «Եկամտի փոխարինման ջանքերը
- Անտառային հրդեհներից առաջ ունեցել է ամսական եկամտի ավելի քան 10%-ի ուղղակի ֆինանսական ազդեցություն
- Նախկինում վարձակալության կամ հիփոթեքի համար FEMA-ից և/կամ ապահովագրությունից ստացված օգնություն
- Այս դրամաշնորհի ընդունումը բավարարում է վարձակալության ամբողջական պարտքը՝ իրավասու ժամանակաշրջանի համար:
- Հարկավոր է օբյեկտ(ներ)ը վերադարձնել վարձակալության շուկա դրամաշնորհը ստանալուց հետո 12 ամսվա ընթացքում

### Մեկ դիմում մեկ վարձակալված օբյեկտի համար

Մի՛ ներկայացրեք մի քանի դիմում: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է հետաձգել ձեր դիմումի դիտարկումը:

- Չի կարող ներկայացվել և հաստատվել մեկից ավելի դիմում նույն վարձակալության օբյեկտի համար:
- Տնատերն ու վարձակալը չեն կարող լինել նույն անձը:

# Կարևոր նշումներ դիմումի ներկայացման գործընթացի վերաբերյալ

**Անձնական նույնականացման տվյալներ (PII)**
Անձնական նույնականացման տվյալները չեն կարող ուղարկվել վարձակալների կամ տնատերերի կողմից էլփոստով:

- Դիմումին կից բոլոր փաստաթղթերը դիմումատուների կողմից վերբեռնվում են անմիջապես դիմումների պորտալում:

Գործերի կառավարման թիմի բոլոր անդամներն անցնում են վերապատրաստում՝ ծրագրում հաճախ օգտագործվող PII-ի օրինակների և այլ տվյալների գաղտնիությունը պահպանելու և պաշտպանելու իրենց պարտականությունների հետ կապված:

**Վարձակալի մասնակցություն**
Վարձակալներից կարող է պահանջվել վավերացնել դիմումում ներկայացված տեղեկությունները, ներառյալ՝ առանց սահմանափակումների.
- Դիմումում նշված իրենց եկամուտների մակարդակի հաստատում:
- Ներկայումս ազդեցության ենթարկված օբյեկտում (այն օբյեկտը, որի համար տնատերն օգնություն է խնդրում) բնակվելու հաստատում:

Ծրագրի ներկայացուցիչը կապ կհաստատի ձեր վարձակալի հետ Լոս Անջելեսի վարձակալության վճարների մասով օգնության ծրագրի համար ձեր դիմումի բացակայող տեղեկությունների կամ փաստաթղթերի համար: Չարձագանքող վարձակալների դեպքում կարող է լինել դիմումի դիտարկման հետաձգում կամ դիմումի որակազրկում:

**Խնդրում ենք հաշվի առնել. Այս ծրագրի շրջանակներում տրամադրվում է սահմանափակ ֆինանսավորում, և իրավունակության պահանջները բավարարող դիմումատուների թիվը կարող է գերազանցել հասանելի միջոցները: Դիմում ներկայացնելը և/կամ ծրագրի իրավասության պահանջները բավարարելը չի երաշխավորում ֆինանսավորման ստացումը:**

# Դիմումի նախադիտում

Սեղմեք այստեղ՝ դիմումն ԱՆԳԼԵՐԵՆՈՎ դիտելու համար։

**Շուտով հասանելի կլինի ավելի շատ լեզուներով։** Դուք կկարողանաք դիտել դիմումը հետևյալ լեզուներով՝

- արաբերեն
- հայերեն
- չինարեն (պարզեցված և ավանդական)
- պարսկերեն
- հինդի
- ճապոներեն
- քմեր/կամբոջերեն
- կորեերեն
- ռուսերեն
- իսպաներեն
- տագալերեն
- թայերեն
- վիետնամերեն

Շարունակեք հետևել թարմացումներին www.lacountyrentrelief.com կայքում։

LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF

# Դիտարկման գործընթացը

# Դիտարկման գործընթացը

Այս ծրագրի գործերի կառավարիչները կուսումնասիրեն հետևյալ (առանց սահմանափակումների) տեղեկությունները՝ որոշելու, թե արդյոք հայտատուն իրավունակ է.

a. Հաստատել, որ վարձակալված գույքի հասցեն գտնվում է ծրագրի աշխարհագրական սահմաններում (Լոս Անջելես վարչաշրջանում):

b. Ստուգել վարձակալության օբյեկտի սեփականությունը՝ օգտագործելով հայտատուի փաստաթղթերը և երրորդ կողմի վավերացումը:

c. Հաստատել վարձակալի ինքնությունը և վարձակալական հարաբերությունները:

d. Հաստատել, որ օբյեկտը ներկայումս զբաղեցված է տուժած վարձակալի կողմից:

e. Հաստատել, որ վարձակալության պարտքերը և ծախսերը կուտակվել են 2024 թվականի դեկտեմբերի 17-ին կամ դրանից հետո:

f. Հաստատել, որ վարձակալը լրացրել է *Ինքնահավաստագրման ձևը*՝ վտարման պաշտպանության համար (1-ին կատեգորիա)

g. Հաստատել, որ վարձակալը սկսել է եկամտի փոխարինման ջանքեր:

h. Հաստատել, որ վարձակալն անտառային հրդեհներից առաջ ունեցել է ամսական եկամտի ավելի քան 10%-ի ուղղակի ֆինանսական ազդեցություն

i. Վավերացնել հայտատուի և/կամ վարձակալի տարածքային միջին եկամուտը (Area Median Income, AMI):

j. Ստուգել վճարման մանրամասները և W9 տեղեկատվությունը երրորդ կողմի ռեսուրսների միջոցով:

k. Հաշվարկել պարգևատրման վճարը:

Ի լրումն հայտատուի իրավունակությունը որոշելուն՝ դիմումի վերանայման գործընթացը երաշխավորում է, որ կրկնակի վճարումներ չկատարվեն՝ հաստատելով հետևյալ նվազագույն չափորոշիչները.

a. Ոչ ոք չի կարող ներկայացնել և հաստատել մեկից ավելի դիմում նույն վարձակալության օբյեկտի համար:

b. Տնատերն ու վարձակալը չեն կարող լինել նույն անձը:

Եթե դիմումում բացակայում են տեղեկություններ և/կամ անհրաժեշտ են լրացուցիչ փաստաթղթեր՝ իրավունակության վերաբերյալ խորհրդի համար, գործի կառավարիչը կկապվի հայտատուի հետ՝ օգտագործելով կապի իր նախընտրած եղանակը (այսինքն՝ զանգահարել կամ էլ. նամակ ուղարկել) և հայտատուին կրկին կգրանցի դիմումների պորտալում:

Դուք ցանկացած պահի կարող եք մուտք գործել պորտալ՝ կարգավիճակի թարմացումները ստուգելու համար: Խնդրում ենք այցելել 26-28-րդ էջերը՝ դիմումի տարբեր կարգավիճակների և դրանց նշանակության մասին իմանալու համար:

**Շարունակությունը՝ հաջորդ էջում:**

# Հայտատուի կարգավիճակ

Հաճախակի և ցանկացած պահի ստուգեք ձեր դիմումի պորտալը կարգավիճակի թարմացումների և Լոս Անջելես վարչաշրջանի արտակարգ իրավիճակներում վարձակալության վճարների մասով օգնության դրամաշնորհային ծրագրի համար՝ ձեր դիմումի հետ կապված խնդիրների համար:

| Հայտատուի կարգավիճակ | Ինչ է դա նշանակում |
|---|---|
| Դիմումը չի ներկայացվել | Տնատերը բացել է դիմումը, սակայն դիմումը չի ներկայացվել:<br>• Տնատերը դեռ կարող է փոփոխություններ կատարել դիմումում, քանի դեռ այն ընթացքի մեջ է: Տնատիրոջ կողմից դիմում ներկայացնելուց հետո նա չի կարողանա խմբագրել այն առանց գործի կառավարչի աջակցության: |
| Դիմումը ներկայացվել է. Սպասման խմբի հանձնարարության սպասում | Տնատերը դիմումը ներկայացրել է և սպասում է առաջնահերթությունների սահմանմանը: |
| Դիմումը ներկայացվել է. Սպասման ցուցակի 1-ին խումբ | Տնատերը ներկայացրել է իր դիմումը, և այն առաջնահերթության տվյալների հիման վրա ճանաչվել է որպես ամենաբարձր առաջնահերթության գործ: |
| Դիմումը ներկայացվել է. Սպասման ցուցակի 2-րդ խումբ | Տնատերը ներկայացրել է իր դիմումը, և այն առաջնահերթության տվյալների հիման վրա ճանաչվել է որպես երկրորդ առաջնահերթության գործ:<br>• Երկրորդ առաջնահերթության գործերը կդիտարկվեն միայն այն ժամանակ, երբ ավարտվի ամենաբարձր առաջնահերթության գործերի դիտարկումը: |
| Դիմումը ներկայացվել է. Սպասման ցուցակի 3-րդ խումբ | Տնատերը ներկայացրել է իր դիմումը, և այն առաջնահերթության տվյալների հիման վրա ճանաչվել է որպես երրորդ առաջնահերթության գործ:<br>• Երրորդ առաջնահերթության գործերի վերանայումը պայմանավորված է ամենաբարձր և երկրորդ առաջնահերթության գործերի դիտարկման ավարտով: |
| Դիմումը ներկայացվել է. Սպասման ցուցակի 4-րդ խումբ | Տնատերը ներկայացրել է իր դիմումը, և այն առաջնահերթության տվյալների հիման վրա ճանաչվել է որպես չորրորդ առաջնահերթության գործ:<br>• Չորրորդ առաջնահերթության գործերի վերանայումը պայմանավորված է 1-3 առաջնահերթության գործերի դիտարկման ավարտով: |
| Դիմումի ստացման դիտարկում | Գործի համար նշանակվել է գործի կառավարիչ: |

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

# Հայտատուի կարգավիճակ

Հաճախակի և ցանկացած պահի ստուգեք ձեր դիմումի պորտալը կարգավիճակի թարմացումների և Լոս Անջելես վարչաշրջանի արտակարգ իրավիճակներում վարձակալության վճարների մասով օգնության դրամաշնորհային ծրագրի համար՝ ձեր դիմումի հետ կապված խնդիրների համար:

| Հայտատուի կարգավիճակ | Ինչ է դա նշանակում |
|---|---|
| Լրացուցիչ տեղեկությունների սպասում | Գործի կառավարիչը տնատիրոջից պահանջել է լրացուցիչ տեղեկություններ և/կամ փաստաթղթեր, որոնք բացակայում էին դիմումում: |
| Վարձակալի լրացուցիչ տեղեկությունների սպասում | Տնատիրոջ դիմումում տրամադրվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն, վարձակալը չի ապացուցել իրավունակությունը: Գործի կառավարիչը կկազմակերպի իրազեկում վարձակալի բացակայող տեղեկությունների համար |
| Դիմումը դիտարկման մեջ է | Դիմումը ներկայումս գտնվում է գործի կառավարման թիմի կողմից դիտարկման փուլում: |
| Ներկայացված է վճարման | Գործը համարվում է իրավունակ պարգևի համար և ներկայացվել է վճարման: |
| Սպասվում է վերջնական վերանայում վճարման համար | Կկատարվի վերջնական վերանայում մինչև վճարումը տրամադրելը: |
| Վճարը տրամադրվել է | Վճարը տրամադրվել է հայտատուին: |
| Դիմումի լրացում. Ոչ իրավունակ | Գործի կառավարման թիմի կողմից հաստատումից հետո պարզվել է, որ գործի չի համապատասխանում պահանջներին: Անհամապատասխանության ծանուցումն ուղարկվում է առաջատարի կամ գործի կառավարչի կողմից՝ մանրամասնելով որակազրկման պատճառները: |
| Բողոքարկումը ներկայացված է | Անհամապատասխան ճանաչվելուց հետո հայտատուներին հնարավորություն կտրվի բողոքարկել որակազրկման պատճառները: |
| Բողոքարկումը դիտարկման մեջ է | Գործին նշանակվել է բողոքարկման համակարգող և սկսվել է դիտարկում: |

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

# Հայտատուի կարգավիճակ

Հաճախակի և ցանկացած պահի ստուգեք ձեր դիմումի պորտալը կարգավիճակի թարմացումների և Լոս Անջելես վարչաշրջանի արտակարգ իրավիճակներում վարձակալության վճարների մասով օգնության դրամաշնորհային ծրագրի համար՝ ձեր դիմումի հետ կապված խնդիրների համար:

| Հայտատուի կարգավիճակ | Ինչ է դա նշանակում |
|---|---|
| Բողոքարկումը հաստատվել է | Բողոքարկման համակարգողը որոշել է, որ գործը իրավունակ է ներկայացված բողոքարկման փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո: Բողոքարկման համակարգողը հաստատում կուղարկի էլ. նամակով՝ մանրամասնելով այն հիմքերը, որոնց մասով հայտատուն հաջողությամբ բողոքարկել է: |
| Բողոքարկումը մերժվել է՝ Գործն իրավունակ չէ | Բողոքարկման համակարգողը որոշել է, որ գործը կրկին չի համապատասխանում պահանջներին: |
| Առանց արձագանքման | Գործի կառավարիչը բազմաթիվ փորձեր է կատարել կապվելու համար, սակայն տնատերը չի արձագանքել: |
| Չարձագանքած վարձակալ | Գործի կառավարիչը բազմաթիվ փորձեր է կատարել կապվելու համար, սակայն վարձակալը չի արձագանքել: |
| Կրկնօրինակ | Տնատերն ունի 1-ից ավելի գործ նույն վարձակալության օբյեկտի համար: |
| Կրկնօրինակ — վարձակալ | Վարձակալն ունի 1-ից ավելի գործ նույն վարձակալության օբյեկտի համար: |
| Դուրս եկած | Տնատերը կապվել է գործի կառավարչի հետ և հայտարարել, որ այլևս չեն ցանկանում մասնակցել |
| Վերաուղղորդված դիմում | Հայտատուն սույն ծրագրի իրավունակության ներքո չէ և իր գործի կառավարչից արտաքին ռեսուրսներ կստանա այլ օգնության/աջակցության համար: |

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF

# Բողոքարկման դիտարկման գործընթացը

# Բողոքարկում

Հայտը դիտարկելուց հետո որոշում կկայացվի՝ կա՛մ հայտատուին տրամադրել իր խնդրանքում ներկայացված ամբողջ գումարը, կա՛մ խնդրանքում ներկայացված գումարի մի մասը, կա՛մ համարել, որ ճանաչել հայտատուին ոչ իրավունակ պարգև ստանալու համար:

**Խնդրում ենք հաշվի առնել. Այս ծրագրի շրջանակներում տրամադրվում է սահմանափակ ֆինանսավորում, և իրավունակության պահանջները բավարարող դիմումատուների թիվը կարող է գերազանցել հասանելի միջոցները: Դիմում ներկայացնելը և/կամ ծրագրի իրավունակության պահանջները բավարարելը չի երաշխավորում ֆինանսավորում ստանալը:**

Դիմումատուն կարող է բողոքարկել որոշումը՝ հետևելով որոշման էլ. նամակում նշված հրահանգներին և ներկայացնելով բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են խնդրանքը հաստատելու համար:

- Միայն ՄԵԿ բողոքարկում կարող է ներկայացվել միայն հայտատուի կողմից:
- Բողոքարկումը պետք է ներկայացվի ծրագրին Անհամապատասխանության ծանուցումից հետո 30 օրվա ընթացքում:

Երբ բողոքարկումը հաջողությամբ ներկայացվի, այս ծրագրի հատուկ նշանակված թիմի անդամները կվերանայեն բողոքարկման ներկայացումը: Կվերանայվեն միայն հայտատուի բողոքարկման պատճառներին վերաբերող տեղեկությունները:

Եթե լրացուցիչ կապի հաստատում կամ պարզաբանում է պահանջվում, թիմի անդամը կապ կհաստատի հայտատուի հետ՝ օգտագործելով կապի իր նախընտրած եղանակը: Եթե հայտատուն տրամադրի պահանջվող տեղեկատվությունը, այն կքննարկվի բողոքարկման մասով որոշման կայացման ընթացքում: Հակառակ դեպքում, կդիտարկվեն միայն պարգևի որոշման պահին տրամադրված փաստաթղթերն ու տեղեկությունները: Դիտարկման ավարտից հետո թիմի անդամը կամ կհաստատի կամ կմերժի բողոքարկումը:

Բողոքարկման դիտարկումը դիմումի վերջնական դիտարկումն է՝ այն բողոքարկման համակարգի միջոցով ներկայացվելուց հետո: Բողոքարկման կարգավիճակի վերաբերյալ վերջնական ծանուցումը կուղարկվի հայտատուին և վարձակալին:

# Հաճախորդների զանգերի կենտրոն

(877) 849-0770

Երկուշաբթի – ուրբաթ*
ժամը 8:00-ից մինչև 17:00 PT

Հունվարի 19-23
Երկուշաբթի – ուրբաթ*
ժամը 7:00-ից մինչև 19:00 PT
*Բացի նահանգային և դաշնային տոներից

## Արագ հղումներ

Ծրագրի համառոտ նկարագրություն
Պահանջվող փաստաթղթեր
Ինչպես բացել դիմում
Դիմումի ներկայացման գործընթացը
Դիտարկման գործընթացը
Բողոքարկման դիտարկման գործընթացը

LOS ANGELES COUNTY
EMERGENCY
RENT RELIEF